

# ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

№ 2



Ա. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ՆՈՅԵՄԲԵՐ 1896

ԹԻԻ 28

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1896 տարեկանի

Պաշկարիոյ համար տարեկան 8 ֆր

" " 1/2 " 4 "

" " 1/4 " 2 "

Արտատպանի համար " 10 "

" " 1/2 " 5 "

Կանխիկ վճարելի

Շաբաթ Կրամ եռաշաբաթ Խրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱՏԱՐԱԿՈՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ (ՊՈՒԼԿԱՐԻՍ)

Редакция на вѣстникъ

„Ирaвункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ոչդրեալ գրութիւնք եւ չիւղիտիւր եւ յարմար դատաւաններն միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:

Ծանոցմանց տողը 20 տանքիւմ երեքիւն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղջ կը լինի:

## ՇԱՏ ՈՒԾ

Արմենի լրագիրը, որոյ մէկ յօդուածը քաղաքապետարար տարտառապած ենք մեր ներկայ թիւին մէջ, իր մէկ թղթակցին տեղեկութեանց համաձայն կիմաքնէ թէ Թուրքը իր հայապահ քաղաքականութիւնը փոխելու հարկը զգացեր է, անշուշտ իրեն պատշաճ երեւցած չափով ու աստիճանով:

Պոլսէն հասած անգլիկութիւններ հաստատել կը թուին այս լուրը:

Սուլթանը վաւերացուց Օրմանեան Սրբազանի ընտրութիւնը իբր Պատրիարք Թրքաշայոյց. հայոց ձեռքադրութիւնները զգալապէս նուազած են. բանտարկեալներու մէկ մասը ազատ արձակուեցաւ: Թէեւ նորանոր կոտորածներ գուցէ լուրեր տարածուեցան, բայց ցարդ չի ստուգուեցան և Սուլթանը կարգ մը վախներու, մեղքներու ներքեւ են. հայազգի օգնականներ նշանակեց:

Տարակոյս չկայ որ եթէ Գուլը իրօք որոշած է փոփոխել իր քաղաքականութիւնը հայ ազգին հանդէպ, փոփոխութիւնը կրնայ թըրքաշայերուն քիչ մը շունչ առնել տալ առժամայէն, բայց ոչ երբեք գոհացնել զանոնք, առ պարզ պատճառաւ որ ձեռք առնուած միջոցները հայերը գոհացնելու և անոնց իրաւունքները ճանչնալու գիտումով մտածուած չեն, այլ ատոնց շարժառիթ պէտքէ փնտռել տարբեր հանգամանքներու մէջ:

Թուրք պետական մարդիկ այնչափ խելք ունենին որ զգային թէ այսուհետեւ կոտորածները մեծ գոհացութիւն պիտի պատճառէին նոյն իսկ Թուրքիոյ ամենէն բարեկամ երեւցող տէրութեանց և երկրին վրայ պիտի հրաւիրէին օտար միջամտութեան մը վտանգը, անոր տնտեսական քայքայման տալով ուժգին մղում մը, որոյ անմիջական հետեւանքը պիտի ըլլար ընդհանուր վարչական անխիտանութիւն: Այո, երկրին տնտեսական վիճակն, զոր Թուրքիան հասած լուրեր հետզհետէ աւելի տխուր գոյներով կը ցուցնեն, հրամայաբար կը պահանջէր որ խուզուութիւնները դադրին. հոս է ըստ մեզ

Տատեան Տիրան պէյի ճանրորդութեան և Եւրոպայի գործիչներու հետ տնտեսականութեան եթէ ոչ միակ գաղափարը, գէթ գաղափարներէն մին:

Ի զուր ֆրանսական թերթեր անապարձ փորձեր կ'ընեն համազել իրենց ընթերցողները թէ Տ. Հանօթօի ճառին տպաւորութեան ներքեւ Թուրք կառավարութիւնը ըստիպուեցաւ նոր ուղղութիւն մը տալ իր ներքին քաղաքականութեան: Այլապէս զիտէ թէ Թուրքը անգոյն խօսքերու և պղտուտեան ցոյցերու համար ծիծաղ ու արհամարհանք միայն ունի:

Եւրոպական դիւանագիտութեան ձեւակերպական ձեռնարկները արգահատելի վախճանի մը յանգեցան իրենց օձապոյտ ճամբաներով և իրերու տրամաբանական ընթացքին, որոյ վախճանը տնտեսական և վարչական ահաւոր անկումն է, մնացած է՝ գուցէ յամը, սակայն անխուսափելի կերպով գործադրել արդարութիւնը այն անօրինակ ոճիւններու նկատմամբ, զոր գործնց Թուրքիա:

Թուրք կառավարութեան յատկանշիչներէն մին է անիրեւակայելի անհեռատեսութիւն մը որոյ հետեւանքը նա շատ ուշ զգաց ահաւոր վտանգն, որ Թուրքիոյ գոյութեան կը սպառնայ. կիսկաւ տար միջոցներով այդ վտանգի առջեւ առնելու խորհուրդը գեղեցիկ երազ մը դարձած է այլ եւս: Կամ Թուրքիոյ վարչութիւնը պարտի երկրին մէկ ծայրէն միւսը արմատապէս բարեփոխել, կամ պէտք է որ Թուրքիա կործանի, որովհետեւ մեզ հասցուց կործանման մօտ վիճակի մը:

Արգարութիւնը պիտի գործադրուի:

## ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ

Գրողի մը յաճախ մեծ գիտաւորութիւն կը պատճառէ գիտնալ թէ իր ընթերցողներուն տարբեր գասակարգերուն մտային զարգացման մէջ այնքան նշանաւոր տարբերութիւն կայ, որ շատ անգամ ուշերով կրկնութիւն և հետեւաբար անօգուտ պէտք է համարել մէկ

գասակարգին համար, ինչ որ միւսին համար օգտակար և հարկաւոր կ'երեւի գրել և յիշելու միտումնային կատուածով ինչդիր մը կը դառնայ նոյնպէս բացատրութեան ձեւն ու եղանակը, որ կրնայ ընթերցողներուն մի մասը գոհացնելով հանգերձ, միւսին համար չըլլալ բաւական պարզ և դիւրահասկանալի:

Այսպիսի պարագայի մը մէջ գրողին պարտականութիւնն է, երբ կը խօսի հանրային ինքնակրօն վրայ, բոլոր ընթերցողներուն հասկնալի ըլլալու նպատակին զոհելու ինչ ամեն նկատաւորութիւն և օգտակար ըլլալու ջանք ընդհանրութեան, որոյ մէկ մասը, և մեր մէջ գոթալգաբար մէկ շատ փոքր թիւ մասը՝ կը կազմեն անոնք, որոնք ուսնալ, զարգացնալ դասին կը պատկանին:

Մենք այս սկզբունքէն կ'առաջնորդուինք քննադատութեան, առնոր օգտին և այլ հանգամանքներուն նուիրուած այս տողեր գրելու ժամանակ՝ յանձն առնելով մեր ընթերցողներու ամենց արգէն ծանօթ միտքեր յայտած ըլլալու անպատեհութիւնը:

Հանրային գործերու ընթացքին համար անհրաժեշտ պայման մ'է քննադատութիւնը, անկից՝ ուղղափառ, անկողմնաբայ, իր չափին մէջ օրինաւոր և իր ձեւին մէջ պատշաճաւոր քննադատութիւնը, որ զերծ ամեն անձնական և այլ անխտատական գիտումներէ՝ կը միտի միայն ծառայել իր ազնիւ նպատակին:

Մեր մէջ մանաւանդ, ուր հանրային գրելու ամեն տեսակ գործունէութեանց պատասխանատուութիւնը, օրինական թէ լոկ բարոյական, պատմական հանգամանքներու ընտանի բերմամբ այնքան թույլ է, կարեւորագոյն գեր մը ունի կատարելիք արդար քննադատութիւնը՝ թէ իբր նախազգուշական դարման՝ առջեւ առնելով թեւ թե օգնելով բառաւոր արգէն գոյութիւն ունեցող ֆրանսական վիճակ մը, կամ հանգամանքներ զորս քննադատը երեւան կը հանէ ու կը յանձնէ հանրային գաստատուններ:

Թերութիւն, զեղծում և անփութութիւն այս աշխարհի մէջ ամեն ժամանակ և ամեն ուրեք կրնան տեղի ունենալ. ուր մնաց մեր մէջ, որ զուրկ ենք վարչական քիչ շատ գորաւոր կազմակերպութեան մը, և չունինք միջոցներ հանրային ամեն գործունէութիւն և աշխատութիւն, որպէս արժան է, վարձատրելու, պարագայ մը որ ինչ կ'ուզեն բան, մեծ նշանակութիւն ունի գործիչներուն պարտուց զգացման աստիճանին համար. բացառութիւնները, որոնք նիւթական վարձատրութեան քանակին անուշադիր՝ միայն գործելու համար կը գործեն, որքան յարգելի, նոյնքան սակաւաթիւ են:

Ցաւալի է բան թէ քննադատութեան կարեւորութիւնն ու օգուտը ոչ միայն, ինչպէս արժան է, չքննադատուի մեր մէջ, այլ և ընդհակառակը շատեր բոլորովին սխալ կերպով կ'ըմբռնեն անոր նշանակութիւնը. հազուադէպ չեն Պուլկարահայերու մէջ անոնք, որ քննադատութիւն ըսելով աւելի կը հասկնան թշնամանք և չարակամութիւն՝ ծնած ու սնած անձնական կամ կուսակցական կիրքերէ ու դիտումներէ:

Այս քննադատ գաղափարը, որ կը զրկէ մեզ ճշմարիտ քննադատութեան օգուտներէն և զոր արմատախիլ ընելու ջանալ ամեն խելահաս մարդու պարտքն է, ոչ միայն թերի գաստիարակութեան արգելք է, այլ և հայ մամուլը քննադատական զեղծումներուն, որոնք հազուադէպ չեղան վերջին ժամանակներ, և ընդհանրապէս յուր տպաւորութիւն թողուցին. Որքան ուղիղ քննադատութիւնը գնահատելի, այնքան գաստապարտելի են քննադատական զեղծումները: Ուստի ինչպէս ուրիշ պարագաներու մէջ, նոյնպէս քննադատութեան նկատմամբ պէտք է խոր գնել այդ երկու տեսակին, օգտակարին ու ֆրասակարին միջև, քաջալերել մին, հարուածել միւսը:

«Իրաւունք» ի ընթերցողները կրնան բացարձակապէս վստահ ըլլալ որ մեր քննադատականները պիտի ըլլան միշտ արդար, միշտ հանրային օգտին ծառայելու նախանձախնդրութեամբ գրուած, միշտ ազատ անձնական գիտումներէ և միշտ վեր ամեն ծածուկ միտումներէ:

(Շախումսկի)



ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԳԱՂԹԱԿԱՆԱՑ

ՄԱՍԻՆ

Վարնայի մէջ երկու շաբաթ առաջ տեղի ունեցած ոճիրը, որ այնքան ցաւալի է գնահատան տեսակէտերով, ամենուս նոյնպէս ազդեց տրուել գերակատարներուն մէջին, և միւս կողմէն խորին վշպով համակեց ամեն Հայու սիրտ որ վարժուած է պարծիլ իր ազգային համեմատաբար զգաստ նկարագրովը:

Մեծ ու փոքր քանի մը կռիւներէ յետոյ, երբ գաշգոյն ալ կուգայ դեր մը կատարել Հայ գաղթականաց մէջ, պատրանքն է որ կը նկատի յաջորդել այսպիսի քաղցր և հին ժամանակներէ ի վեր ամեն տեղ արմատ թողած համագման մը:

Անտարակոյս անհատի մը վարքէն ու գործերէն ամբողջ հասարակութեան մը նկարագրին որպիսութիւնը հետեւեցնել տրամաբանական չէ, հետեւաբար ոչ մի լուրջ մարդ կարող է այդ ընել. սակայն մեր նորեկ գաղթականի վիճակին մէջ, ուր օտար բնիկ տարրերը տակաւին նոր գաղափար մը պիտի կազմեն մեր վիճակին ու բարքին վրայ, անհատական գործերն չեն կարող բոլորովին անհետ անցնիլ առանց մտքերու վրայ լաւ կամ յոռի ու և է ապաւորութիւն մը թողելու: Լաւ է որ յիշեց միշտ զայս:

Գիւրտհասականալի է որ գաղթականի յեղեղուկ և վշտերով լի կեանքը դառնացուցած ըլլայ սրբուրը. սակայն այս ամէն պարագայի համար արդարացում մը չը կրնար նկատուիլ անշուշտ ոչ յաշտ ազգայնոց և ոչ մանաւանդ կառուավորութեան, որ մեզ պէս առժամեայ հիւրերու վրայ օրինաց ամեն խստութիւնները գործադրելու ցաւալի հարկին կենթարկուի: հակառակ աշխարհիս լաւագոյն բարեացակամութեան, որոյ, տրեքուրութիւն է խոստովանիլ, առարկայ ըրած է Հայերս:

Ողջմտութիւնը և հայ մարդու պարտքերը կը հրամայեն մեզ ամեն նուս՝ այնպիսի ընթացք մը բռնել մեր անհատական կեանքին մէջ որ ոչ միայն վանէ ամեն աննպաստ ապաւորութիւն, այլ և աստիճանաբար տծի մեզ նկատմամբ համարումն այն ազգին, որոյ հետ շօշափման մէջ մտած ենք, և անգամ մ'ալ շնչտուի մեր դարաւոր բարի համբաւը:

Այսպիսի փափաքելի արդիւնքի մը կարելի է յանգիլ օրինակով և բարի խրատներով:

Թող ամեն ոք զգաստութեան օրինակ մը ըլլալով հանդերձ իր շրջանին մէջ, բարի խրատատու մը հանգիստնայ իր այն բարեկամներուն, որոնք կրնան մոռացութեան տուած ըլլալ այն լուրջ ու տխուր պարագաներ, որ զմեզ հոս նետեցին և յիշեցնէ անոնց թէ մենք պէտք ունինք ամենքս ալ, մեծ թէ

փոքր, մեր համայն բարոյական ոյժին և յատկութեանց՝ արժանապէս դիմադրելու համար զմեզ հաղածող անողորմ բողոքին: (Գաղթական մը)

ՈՒՐ ԵՆ ՄԵՐԻՆՆԵՐԸ

Ամեն առտու դէմ կեղան առնք իրենց պարզ արդուզարդին մէջ, գիրքերը ձեռուընին, ոմանք ձեռագործի կամ գծագրութեան նիւթեր ունին միասին. պուշկար և յոյն դպրոցական աղջիկներ են ասոնք, որոց վրայ կը տեսնուին նորամուտ քաղաքակրթութեան և մտային աշխատութեան նշանները: Իբր Գոլսեցի անձանթ ըլլալով ինձ վարնա և իր կեանքը ընտանեկան թէ ազգային, կը հարցնեմ տեղացի բարեկամի մը:

— Բայց ուր են մերիները. ուր են մեր դպրոցական աղջիկները:

— Մերիները, բարեկամս, տունը կը մնան մեծ մասամբ. ունեւոր գաղափարներն դուստրիւր ընդհանրապէս կը յաճախեն նորահաստատ Արծրունեան վարժարանը, իսկ նուազ բարեկեցիկ կամ չքուոր գաղափարներ աղջիկներուն համար չկայ ազգային դպրոց մը: Ունեցանք աշխատող կիներ իրենց սեւին մտաւորական յառաջդիմութեան համար, սակայն անոնց աշխատութիւնը չլատեց պակաս այն բարի կամեցողութեան կամ քաշալերութեան, որուն արժանի էին իրենց անձնուէր շնքերը: Դուք թուրքիացիք ունիք կառավարութիւն մը ձեր գէմ՝ որ սոհման կը դնէ ձեր յառաջդիմական ձգտումներուն և երբեմն կը խեղդէ զանոնք: Այստեղ, բարեկամս, այս ազատ երկրին մէջ, մեր անհոգութիւնը աւելի զօրաւոր է քան ու է արգելք, որ դուքսն կուգայ. մեր մէջ ցաւը ներսէն է:

Ու տխուր գաղափար մը կունենայի իմանալով որ զրկուած են ուսանիլ անոնք, որ ապագայ մայրեր պիտի ըլլան, որ ապագայ ընտանիքը պիտի կազմեն:

Եթէ խնդիրը դրամի պակասութեան վրայ էր, պէտք էր թէ արդարեւ և թէ աղկանց դպրոցներու ծախքերուն վրայ ընդհանուր խնայողութիւններ ընել, բայց ամեն պարագայի մէջ կանգուն պահել երկու դպրոցները միասին: Հիմայ միայն աղջիկներն են որ կը տուժեն:

Արդեօք կարծողներ կա՞ն թէ մանչերու աւելի պէտք են ուսում և կրթութիւն քան աղջկանց, որովհետեւ չուկայի մարդիկ պիտի ըլլան: Բայց միթէ ուսումն տան մէջ ալ պէտք չէ. միթէ մարդ փարա՞ շահելու համար կուսանի:

Պուշկարիոյ Հայը փափուկ դիրքի մը մէջ կը գտնուի օտար տարրերու հանդէպ, որ զինք կը շրջամարդ տեսն. հիմա անոնք կը յառաջդիմեն, մենք կեցած ենք ու գաւառած. անոնք նոր դպրոցներ կը բանան, մենք եղածը կը գոցենք:

Պէտք կա՞յ ըսել թէ մեր ազգային գոյութիւնը կը վտանգուի, երբ մենք ազգային կանոնաւոր դպրոցներ չունենանք այսօրինակ հանգամանքներու մէջ:

Ե. Գ.

«ՄԻՈՒԹԻՒՆ» ԹԵՐԹԸ

Ի շարս անկախ հրատարակութեանց «Միութիւն» անուն թերթ մ'ալ ունեցաւ ազգը, որ ժամանակէ մ'ի վեր իր լուրջ և շրջահայեաց գաւակնորու բերնով փափաք կը յայտնէր որ հայ գործիչները հաստատուն իրենց միջեւ կապ մը, որով կարելի ըլլայ իրենց՝ համաբաշխաբար խորհիլ ու գործել: Սիրելի էր մեզ յուսալ որ «Միութիւն» իր ուղղութեամբ պիտի ծառայէր այս ընդհանուր փափաքին իրականացման, ինչպէս կը խոստանային նորածին թերթին անունն ու յայտարարութիւնները: Սակայն դժբաղդաբար մեր այս յոյսը հաստատուելու բնաւ յարմար չէ, ի մէջ այլոց, «Միութիւն» ի երկրորդ թիւին մէջ հրատարակուած Բարիզեան թղթակցութիւն մը, որ աւելի կը ծառայէ մտքեր գոյթակեցնելու քան զանոնք համաբաշխութեան տրամադրելու և որ կ'ըսէ «Պէտք է ջախջախել եւրոպական տէրութեանց այն գլխաւորները որոնք քաշալերիցին թուրքերը և դիւրացնելին հայկական ընդհանուր կոտորածը: Այո, թող ըսեն թէ Հայեր անխիտանական են»:

«Եւրոպացիներու դէմ մեր ընեւ լիք այս ձեռնարկը պէտք է չուտով սկսիլ և շարունակել անընդհատ, մինչև որ քաղաքական մեծամեծ փոփոխութիւններ տեղի ունենան և յարգուին մեր բոլոր իրաւունքները»:

«Մինչև հիմայ հաղարաւոր զոհեր տուինք, այս գործը կատարելու համար 20-27 անձնապոհներ կը բուեն, որպէսզի մէկուն վտանգուած ատեն միւսը յաջորդէ անմիջապէս»:

Մարդ այս տողերը կարդալով արդար գայրոյթով մը կը լեցուի, որուն կը խառնուի նաեւ ծիծաղի տրամադրութիւն մը: Իրաւունք չունինք հարցնելու թէ արդեօք «Միութիւն» ի յարգելի խմբագրութիւնը ինչպիսի մեզ համար անբացատրելի պատճառներով կամ նկատումներով հաւանած է հրատարակել այսպիսի մի խալ և զիստակար գրութիւն, ճիշդ այն ժամանակ, երբ Պոլսոյ վերջին ցոյցը կազմակերպող Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Թանձնախումբը պէտք զգացած էր առանձին յայտարարութեամբ հերքելու սուտ լուր մը զոր թուրք կառավարութիւնը հրաւարած էր: Եւրոպայի հակակրօնութիւնն ու զայրոյթը գրգռելու համար հայ ազգին դէմ և որոյ համեմատ իւր թէ հայ յեղափոխականները կը պատրաստուէին յարձակում մը գործել մի քանի դես պանատանց վրայ:

Արդ՝ մինչդեռ յեղափոխականներն իսկ իրեն յիշեալ յայտարարութեամբ կը զգայնէին թէ դիւանագիտական միջամտութեան քիչ շատ բան մը կը յուսան, ինչ կը նշանակէ ասորին՝ արտատպել Բարիզ նստող Պարոնի մը անիմաստ և ուռուցիկ ճոռմաբանութիւնները, որոնք ուրիշ բանի չեն ծառայեր, բայց եթէ մեզ Եւրոպացաց ներկայացնելու իւր անիշխանական կամ ոչնչական և ընթերցողին պատճառելու արդար ցասում և գայթակղութիւն:

Եթէ այս պիտի ըլլայ թերթին ուղղութիւնը, ամեն լուրջ Հայ մեզ համարիտ պիտի ըլլայ ըսելու թէ լաւագոյն էր որ բնաւ չունենայինք այսպիսի մի «Միութիւն»:

Ռուստուք 8 նոյ. 1896

Ղարիպ-Ղոշրպէր

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նիւ - Եւրոքէն հոկտ. 29 թուականով Նոր - Դարի ուղղեալ թղթակցութեան մը մէջ կը կարդանք. «Մահատական հաւածանքէն փախուստական հայեր Եւրոպայոյ այլ և այլ կողմերէն սկսան հարկւրներով թափուել յայտնայտ ուղիներուս. հակառակ այն սակեղէն յոյսերու, զոր կը տածէին՝ զըրկաբաց ընդունելութիւն գտնել Ամերիկայի քաղաքակրթ և քրիստոնեայ հանրապետութենէն, հոս եւս՝ բաղդն անոնց առաջն ելու»:

Վերջերս երկու երեք նաւերով հասան 500-ի չափ արք. և 50-ի չափ կոնայք և աղկուճք, որք կուգան Կ. Պոլսէն և Հայաստանի այլ և այլ գաւառներէն. ի նիւ Եւրոք գաղթականաց քննիչ յանձնախումբն խիստ քննութիւններ կը կատարէ և զանոնք մեծ մասամբ անյարմար կը գտնէ ընդունելու, ըստ այն օրինաց զորս Միացեալ Նահանգաց կառավարութիւնն կը սահմանէ ներս թափուող գաղթականաց համար: Առաջին նաւով 180-ի չափ էին, գաղթականաց կոմիտիներն յայտարարեցին թէ 180 Հայերէ միայն 36-ը պիտի կարենան ներս մտնել, իսկ մնացեալք եւս պիտի զրկուին, եթէ ոչ իւրաքանչիւրի համար 500 դոլար գրաւական ապահովցուի կառավարութեան մօտ: Կանանց բարեսիրական ընկերութիւնն երկրի ամեն կողմերէն հեռագրեց թէ ամեն Հայու գործ և ապրելու միջոցներ պատրաստ են. այս բաւական չէր. Լէյտի Հանրի Սոմերսէթ Անգլիոյ կանանց թեմերէն ընկերութեան նախագահն երեկ առաւօտ հեռագրեց թէ իրենք պատասխանատու են, եթէ հայ գաղթականք ցամաք երեկէ վերջ անտէր կամ կառավարութեան վրայ բնաւ ըլլան ասոր վրայ 144 հայեր եւս դուրս ելան Էյլիո Իյլէնտ կղզիէն ուր փակուած կը մնային շաբաթ մը ի վեր. օրէնքն թոյլ չի տալ, իսկ մեր աստ գտնուող հարուստ Հա.



յիւր փորձ մը անգամ չըրին օգտութեան ձեռք կարկառելու. առնեն երախտագիտութիւն կը պարտիմք: Եւ այս տեղի կանանց գիտութեան անմիջական օգնութեան:

Արեւիկէ ճարտար էին այս ճարտար իրենց ճանապարհածոխ իւրապարհէն յիշմարտիկայ: Սալիկիւն Արեւիկէ փոխութեան բանակը կրօնական յարանուանութիւնն հոգացած էր անոնց ծախսն և երբ նաւուն կայարանէն ազատուեցան, զիրենք դիմաւորեցին և Նիւ-Եօքսթը մէջ նոյն օր խնդութեան ժողով ունեցան, ուր ի միջի այլոց խօսեցան նաեւ Հայեր: Այժմ սկսած են աստանդ երկրի տարբեր կողմերն ցըրուել: Այս նոր գաղթող Հայոց մէջ կան անհասանք, որք զեռ տարի մը առաջ կարող, հարուստ էին, աղքատ ընտանիքներ հոգալու կարող այժմ Ամերիկեան օվկանոս վրայ գիտութեան կը գիմն: Ընկերակի փոխել այս տեսարանն առանց արգահատելու և խղճահարուելու:

Թղթակիցը հայ գաղթականութեան հովիւ Մարգարիտ վարդապետ Տէրմանեանի գաղթականաց մասին ցոյց տուած անտարբերութեան գանգատելէ յետոյ կը յարէ.

«Այժմ կը մնայ այդ Հայոց գործ հաստատել, աշխատել մէկ նահանգի մէջ ամփոփել, որով կարենան նաեւ շահերն ամփոփել և յիշատակներ պահել: Գաղթականութեան անհիմն է, ինչոր ալ ըլլայ, որովհետեւ 100 ինչը հազիւ ամբաստանած են, իսկ այստեղ հայ կնոջ սով կայ:

ՏԻՐԱՆ ՊԵՑ ՏՍՏԵԱՆ

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Մեր ընթերցողները կը յիշեն թէ Տատեան Գարուծիւն Բաշայի որդին Տիրան Պէյ Եւրոպայի հայ գործիչներու հետ տեսակցելէ յետոյ՝ Կ. Պոլիս վերադառնալով, ուր որ անկէ՝ յայտարարեւ է ըստ Աման Պաշանիքի՝ թէ Հայ յեղափոխականները իրենց գործունէութիւնը առժամայէն պիտի դադարեցնեն անհետեւ համար թէ պիտի գործադուլին բարենորոգումները և պիտի գադրին հայկական հալածանքները:

Տիրան Պէյի կատարած պաշտօնին մասին՝ Արմենի լրագրին անօրէն Տ. Մինաս Չերապ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ իր թերթին մէջ:

«Տիրան Պէյ բանակցեցաւ ազգային դատով բանակցող Հայերու հետ միայն: Պ. Հանօթօի ճառէն երկու երեք շաբաթ առաջ Բարիդի մէջ անդակցեցաւ հայ հայրենասիրական ընկերակցութեան նախագահ Տ. Իսկէնտէրի և Լոնտօնի մէջ՝ Արփիարի ու Կազարպէկի խումբերու պատկանող շնչակիաներուն և մեր անօրէնին հետ: Ճշգրիտ չենք գիտեր թէ ինչ տեղի ունեցած է մեր յիշեալ հայրենասիրական հետ կատարուած տեսակցութեան մէջ, բայց օգտուած է իր չափը և կարող է իր հօր կողմէն, որ իւր հայ, կոչումով ընէ Արեւմտեքի Հայոց զգոնութեան ու հայրենասիրութեան ընդմիջելու կամ դադարեցնելու համար թուրքերուն միջև, որոնք միեւնոյն հայրենասիրութեան մէջ, որոնք միեւնոյն հայրենասիրութեան մէջ, որոնք միեւնոյն հայրենասիրութեան մէջ:

Կիցիւրուն հետ կատարուած տեսակցութեան մէջ, բայց օգտուած է իր չափը և կարող է իր հօր կողմէն, որ իւր հայ, կոչումով ընէ Արեւմտեքի Հայոց զգոնութեան ու հայրենասիրութեան ընդմիջելու կամ դադարեցնելու համար թուրքերուն միջև, որոնք միեւնոյն հայրենասիրութեան մէջ, որոնք միեւնոյն հայրենասիրութեան մէջ:

Նախագէտ յայտարարեցինք Տիրան Պէյին թէ մենք Արեւմտեքի Հայերուն անուամբ խօսելու ու եւ իրաւունք չունենք. . . . . իբր պարզ անհատ պիտի յայտնենք մեր անձնական կարծիքները և թէ Հայերուն և թուրքերուն միջև հայտնութիւն մը գոյացնելու համար չորս պայմաններ մեզ անհրաժեշտ կ'երեւին»:

Արմենի տնօրէնը մասնանի ըրած է այդ չորս պայմանները, որք են ընդհանուր ներդրութիւն, ընդունուած բարենորոգումներու գործադրութիւնը, Հայերուն ահագին քանակութեամբ գաղթողութիւն, հատկապէս միջին տարեկան հարուստներու քանակի մը անհրաժեշտութեան համար, և սերտագործներու պատժութիւնը:

Տիրան Մինաս Չերապ ապա կ'աւելցնէ:

«Արեւմտահայաստանի թղթակից մը Պօլսէն կը գրէ մեզ թէ Տ. Իսկէնտէր և մեր միւս հայրենակիցները մեզ նման չափաւոր լեզու մը գործածած են Տիրան պէյի հանգեպ և թէ Գարուծիւն բաշա բոլոր այս տեսակցութիւնները հաղորդած է Սուլթանին, որ վերջապէս զգացել է իր քաղաքականութիւնը փոխելու հարկը: Արեւելեան վեհապետները իրենց տեղեկութեան ու տատկանքին մասին այնպիսի գաղափար մ'ունեն, որ չեն կրնար ուղղակի տեղի տալ իրենց հպատակաց պահանջներուն: Այս պատճառով է որ Սուլթանը ձեռապահ թէ տեղի կուտայ Տ. Հանօթօի բաւական անգոյն խօսքերուն . . . . .»

ԵՐԵՎԱՆԻ ԹՈՒՐԿԵՐԸ

ԵՆԻՐԱՊԱ

Հիտաւեալը կը բաղնէ «Յեղափոխութիւն և բարենորոգում» վերնագրով: Երբեք մը զոր հրատարակած է Միլլիթը:

«Բայց ցաւելով կրնանք թէ չափահաս խորհուրդներէ զատ եւ

յայտարարեցինք Տիրան Պէյին թէ մենք Արեւմտեքի Հայերուն անուամբ խօսելու ու եւ իրաւունք չունենք. . . . . իբր պարզ անհատ պիտի յայտնենք մեր անձնական կարծիքները և թէ Հայերուն և թուրքերուն միջև հայտնութիւն մը գոյացնելու համար չորս պայմաններ մեզ անհրաժեշտ կ'երեւին»:

Պ. Հանօթօ ստիպողապէս կը խրատէ մեզ կտ կենալ յանգուգն ձեռնարկներէ և նկատի ունենալ անոնցմէ ծագելիք շարքեր: Բայց ինչու համար իրենք, դիւանագէտներն ալ իրենց յատուկ բարձր տեղումարանութեամբ նկատի չեն առնել այն սուկալի վիճակը, ուր մենք կը գտնուինք և այն հակահարուածը, զոր մեզ ճնշող այդ դէպքերը պիտի ունենան մեր վրայ: Պէտք է որ անձայն թոյլտարներ որ մեզ մոլորեն կամ բանտը նետեն, մինչդեռ դեպքանքը ի վրայ իրենց խորհուրդները կը շարունակեն Սուլթանին, որ մեծ տեղեկութեանց ներկայացուցիչներուն այս բարեօրոգում կամ դիւրեք քաջաբերալ, վերջերս իրենց հասկացող որ եթէ կուզեն որ իրենց բարեկամական կշտամբալից դիտողութիւնները լուս ընդունելու թիւն գտնեն, պէտք է որ փայլուն մետաղը երեւան գայ և թէ ինք չկրնար իր հրամանները գործադրել տալ ստակի չգոյութեան պատճառով: Դիւանները իրեն պատահականցին թէ իրեն դիւրութիւն պիտի ընծայեն մեծօրոգ նախ փոխադրութեան մը համար, եթէ ինք ու հոգի անտալ իրենց խօսքերուն: Սրտագործ է այս համաձայնութիւնը, բայց դժբաղդութիւնը այնտեղ է որ մինչդեռ

այս բանակցութիւնները կը կատարուին, անդին սպանութիւնները կը շարունակուին, բանտերը կը լեցուին, աքսորի հրամանագրերը կը բազմապատուին, անխառնութիւնները, զոհանքները և գողութիւնները կը կատարուին անդադար, և մեզ կելլեն քարոզել համաբնութիւն, համակերպութիւն, և անխառնութեան մոռացում: Մենք ալ կըսենք՝ նախ թող վերջանան սպանութիւնները, բռնաւորներն ու անոնց դաւակնիցները դադարին մեզ հարածելէ, թող վերստին տան մեզ մեր սպասութիւնը և ապա տեսնենք:

Ինչ, դրամ ալ պիտի տրուի այդ մարդոց, որոնք սպանեցին հազարաւոր անմեղ արարածներ, բռնաբարեցին կիները, հրկիզեցին տուները, յօշոտեցին տղաքը, այրեցին քահանաները և վոսփորի մէջ նետեցին սօֆիաները, աքսորեցին մեր բարեկամները. և բնաւ չպիտի պատժուին: Սակայն կը սխալիմ. Տ. Հանօթօ հազարաւոր ներքին միայն մէկ հատ զատեց, հայր Սուլթանի սպանիչը, զընդապետ մը, որոյ գլուխը կը պահանջէ Սուլթանէն: Այս է միակ դահագումը, որ ձեռք պիտի բերուի: Այսու հանգերէ այս փնդապետը հրամանի մը համաձայն գործած է. սակայն եթէ արտօնեալ էր հազարաւոր թրքահայտակալը, իրաւունքները սպաննելու, արգելեալ էր իրեն միակ եւրոպացիի մը դպչել: Այս է ահա եւրոպայի արդարութիւնը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՍԵՍՏՈՒԹ

Ի ՎԱՌՆԱ

Հայ երիտասարդներու ներակազմ խմբակ մը վերաբարձեց մեր անմահ Դուրեանի խնկելի յիշատակը, անոր «Սեւ հողեր» տաւած ներկայացնելով բեմի վրայ: Թերեւս թատերական նուրբ արուեստին չնորհներէն ու հրապոյրներէն զուրկ այս տաւած մեծապէս կը պատշաճ տակոյն մեր ազգի այժմեան սգալի վիճակին, ու ճիշդ միմիայն այս էր որ անանկ խանդավառ բազմութիւն մը ձգած բերած էր թատրոնը կը ցուէինք ըսելու սակայն որ նորակազմ խումբը բոլորովին անյաշուպ կու: Իր այս նախափորձէն բացի մէկ կամ երկու գերակատարեմիւս զրբ ամենքն ալ խակ էին ու չէին սոված և ուսումնասիրած իրենց գերերը: Բաւելը միայն ծագած հարուցան, ուրիշ ոչինչ:

Ուստի գիտել կուտանք այս նորակազմ խումբի երիտասարդներուն որ թող միշտ յայտնեն չափն խանդավառ հասարակութեան մը ներդրամութեանը վրայ: Եթէ կուզեն որ իրենց սկսած այս գործը վերջ ձեռնարկը յաջողութեամբ պատուի և արժանապէս գնահատուի, վերջին ժայր հոգ տանին նեղ թիւն ընտրութեանը, բեմական արուեստին էն տարրական պայմաններուն, և մանաւանդ անճարտար անգիտակից խամաճիկներու պէս չնեղկայանան բեմի վրայ:

Եթէ այս բաներուն ուշադրութիւն ընեն, ապահով թող ըլլան որ հասարակութիւնը պիտի քաջալերէ զիրենք:



